ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

06 մայիսի 2011թ. թիվ 26-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ԿԱՐՄԻՐԱՂԲՅՈՒՐԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԱՍՆԱԿԻ ՍՏՈՒԳՈՒՄ և ԳՈՒՅՔԱԳՐՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ԱԱԾ տնօրենի առաջին տեղակալի 13.04.2011թ. թիվ 2/3/1-1238 գրությունը կարգադրում եմ.

1. Ս/թ մայիսի 6-ից Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Վ. Կ. Աղբյուրի գյուղապետարանի հիմնական միջոցների մասնակի ստուգում և գույքագրում կատարելու նպատակով ստեղծել հանձնաժողով՝ հետևյալ կազմով.
   - Մ. Մխիթարյան - Հանձնաժողովի նախագահ, ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ
   - Ա. Գևորգյան - ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի վարիչ
   - Գ. Հարությունյան - ՀՀ Տավուշի մարզի աշխատակազմի Զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի վարիչ
   - Ժ. Խաչատրյան - ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսական բաժնի առաջատար մասնագետ
   - Գ. Փայտյան - ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գլխավոր մասնագետ
   - Գ. Բաղալյան – ՀՀ Տավուշի մարզի աշխատակազմի Քաղաքաշինության վարչության գլխավոր մասնագետ
2. Հանձնարարել հանձնաժողովի նախագահին հնգօրյա ժամկետում Վ.Կ. Աղբյուրի գյուղապետարանում կատարել հիմնական միջոցների մասնակի ստուգում և գույքագրում:
3. Արդյուքները ներկայացնել սահմանված ժամկետում:
4. Կարգադրության կտարման հսկողությունը դնել ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Ս. Դավթյանի վրա:
5. Սույն կարգադրությունը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ա. ՂՈՒԼԱՐՅԱՆ

06 մայիս 2011թ.
ք. Իջևան